Կարծիք

ՎԱՐԴԻԹԵՐ ԿԱՄՈՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ «ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ և ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ XIXԴ. 30-ԱԿԱՆ Թ.-XX Դ. ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ:

Հայ առաքելական եկեղեցու ռուսահայոց թեմերի գործունեության պատմությանը տարբեր ժամանակներում այս կամ այն չափով անդրադարձել են բազում հեղինակներ, սակայն դա եղել է ըստ հարկի ու մեծ մասամբ էպիզոդիկ բնույթի:

Վ. Գրիգորյանի ատենախոսության գլխավոր գիտական նորույթը հենց այն է, որ նա առաջիններից մեկն է ձեռնամուխ եղել այդ հիմնահարցի ամբողջական համակողմանի ուսումնասիրությանը: Վարդիթեր Գրիգորյանի թեկնածուական ատենախոսությունը, որտեղ փորձ է արվում ամբողջությամբ լուսաբանելու վերոհիշյալ ժամանակահատվածում Վրաստանի և Իմերեթի թեմի վարչակառավարման համակարգի գործունեությունը, որոշակիորեն լրացնում է այդ գործը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են հետազոտության արդիականությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, մեթոդաբանությունը, գիտական ուսումնասիրության աստիճանը և աղբյուրագիտական հիմքը:

Հիմնահարցի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են բազմաբնույթ արխիվային նյութեր, ինչպես նաև թեմային առնչվող թե՛ հայոց և թե՛ ռուսաց լեզուներով հրատարակված սկզբնաղբյուրներ, մատենաշարեր, կանոնադրություններ և օրենքների ժողովածուներ, ինչպես նաև թեմային առնչվող թե՛ հայերենով և թե՛ ռուսերենով հրատարակված մենագրություններ, գրքույկներ և հոդվածներ, նաև պարբերական մամուլից: Գնահատանքով պետք է նշել, որ դրանց զգալի մասը, մասնավորապես արխիվային նյութերը, գիտական շրջանառության մեջ են դրվել առաջին անգամ՝ հեղինակի համար ապահովելով բավականաչափ լայն

տեսադաշտ՝ առաջադրված խնդիրների ամբողջական դիտարկման և քննական լուսաբանման համար:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի կենտրոնական իշխանությունը», Վ. Գրիգորյանը ներկայացրել է 1836թ. «Պոլոժենիե»-ի Իմերեթի թեմի կենտրոնական իշխանության ձևավորման գործընթացը, ինչպես նաև թեմական կառավարման կենտրոնական վարչական մարմնի՝ կոնսիստորիայի կառուցվածքն ու գործունեության շրջանակները:

Երկրորդ գլխում, որը վերաբերում է Վրաստանի և Իմերեթի թեմի փոխանորդություններին և գործակալություններին, ներկայացվել և պարզաբանվել են թեմի եկեղեցական-վարչական բաժանումն ու կառավարման առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ գլխում լուսաբանված է՝ Վրաստանի և Իմերեթի ծխական համայնքների կառավարումը:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի վարչական կառույցի խնդիրներն ու բարեկարգումը», ներկայացվել են թեմական վարչական կառույցի խնդիրները և դրանց վերացման ուղղությամբ կենտրոնական իշխանության ձեռնարկած քայլերը:

Ատենախոսության մեջ քննության են ենթարկվել հիմնախնդիրներ, որոնց զգալի մասը, ունենալով գիտական կարևոր նշանակություն, նախկինում մեծ մասամբ կամ ամբողջովին դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից, և այդ հանգամանքն անշուշտ, պետք է համարել աշխատանքի կարևոր արժանիքը:

Հարկ է միաժամանակ նշել, որ ատենախոսությունը բնութագրվում է հստակ շարադրանքով, զերծ է բովանդակային կրկնություններից և աչքի է ընկնում մտքի հստակությամբ և տրամաբանությամբ, և, այնուհանդերձ, ատենախոսության մեջ առկա են մի շարք թերություններ, որոնց վրա ենք հրավիրում հեղինակի ուշադրությունը: Գտնում ենք, որ Հայ առաքելական եկեղեցու առանձնահատկությունները, առանձին հարցերը և խնդիրները լուսաբանելիս անհրաժեշտ է ավելի խորը ծանոթանալ եկեղեցական տերմինաբանությանը և ներքին առանձնահատկություններին, պահպանելով եկեղեցական պատմագրությանը բնորոշ ավանդույթները և սովորույթները: Լուսաբանելով XIX դարը՝ մեր կարծիքով հարկավոր է պահպանել կամ նախնական ուղղագրությունը, կամ ամբողջովին անցնել ներկա ուղղագրությանը, նաև ավելի ուշադիր լինել ռուսերենից հայերեն թարգմանությանը:

Այսպես, 3-րդ էջում ատենախոսը գրում է. «Դեռևս Պյոտր Մեծից...»: Հայոց պատմագրության մեջ ընդունված է ռուսաց կայսրին կոչել «Պետրոս Մեծ»: Նույն՝ 3-րդ էջի տողատակում անհասկանալի ձևով ատենախոսը Հայաստանյայց եկեղեցու համար Սինոդային կառավարման շրջանն ընդգրկել է ոչ թե 1806-ից 1917-ը, այլ միայն «Պոլոժենիայից» հետո՝ 1836-ից 1917թթ., իսկ Հայ եկեղեցու Սինոդը հաստատվել է 1806թ. հայոց կաթողիկոս Դավիթ Ե Ղորղանյանի կողմից:

Անհասկանալի է նաև 13-րդ էջի պարբերությունը՝ «Հայ առաքելական եկեղեցու թեմական բաժանումը վաղ շրջանում գրեթե համապատասխանում էր Հայաստանի քաղաքական սահմաններին»:

16-րդ էջի առաջին աղյուսակում գրված է Սինոդի գլխավոր դատախազ: Պետք է լինի ուղղակի դատախազ (прокурор): Նույն էջում՝ քիչ ներքևում, թարգմանված չէ օբեր-պրոկուրոր բառը: Կամ երկուսն էլ չենք թարգմանում՝ թողնելով ռուսական ձևը, կամ էլ երկուսն էլ պետք է թարգմանել:

Հեղինակը թույլ է տվել նաև մի շարք վրիպումներ՝ սխալ նշելով կամ էլ ընդհանրապես չնշելով հայ հոգևորականների հոգևոր կոչումները: Ըստ Հայ եկեղեցական ավանդության և կարգի՝ հոգևորականի կոչումը հարկավոր է նշել անվան և ազգանվան միջև, օրինակ՝ Տիրայր վարդապետ Հովհաննիսյան, Գյուտ քահանա Աղանյան և այլն: Ատենախոսը, 18-րդ էջում գրելով Վիրահայության հոգևոր առաջնորդի մասին, նշում է միայն անունն ու ազգանունը՝ Կարապետ Բագրատունի: Ճիշտ ձևը՝ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունի: Նաև էջ 29-ում գրած ավագ քահանա Մովսես Սայադյանց, ավագ քահանա Ավետիք Պոպովի փոխարեն պետք է լինի Մովսես ավագ քահանա Սայադյանց, Ավետիք ավագ քահանա Պոպով:

Էջ 22-ում և 33-ում գրված է «Մակար արքեպիսկոպոս Թեղուտեցի»: Պետք է լինի Թեղուտցի: Եթե օգտագործում ես արդի և աշխարհիկ ուղղագրությունը, սխալ է գրել Ստեփանոս քահանա Սամուելյանց, պետք լինի Սամվելյանց: Ծայրագույն վարդապետ Թադեոս Մանասյանի, անդամներ, համապատասխանաբար՝ Տեր-Մելիքսեթեկ Տեր-Պողոսյանի, Տեր Հովսեփ Տեր-Կարապետյանի, Տեր Մովսես Տեր-Բարսեղյանի և Տեր Սահակ Տեր Սահակյանի փոխարեն պետք է լինի Թադեոս ծայրագույն վարդապետ Մանասյան, Տեր-Մելիքսեդեկ (ճիշտ է Տեր-Մելքիսեդեկ) քահանա Տեր-Պողոսյան, Տեր Հովսեփ քահանա, Տեր-Կարապետյան, Տեր-Մովսես քահանա Տեր-Բարսեղյան և այլն: Բոլորը հոգևորականներ են:

էջ 39. Թեմի անվանումը չի կարող լինել Երևան, Վրաստան, Իմերեթ և այլն: Պետք լինի Երևանի, Վրաստանի, Իմերեթի:

էջ 53. Կովկասի կառավարիչ (управляющий) բառի փոխարեն գործածել կառավարչապետ (главноуправляющий), իսկ գեներալ-անդյուտանտի փոխարեն, գեներալ-համհարզ:

Դոնդուկով-Կորսակով ազգանունը պետք է գրել գծիկով:

էջ 81-ում «... Ախալցխայի փոխանորդ Խորեն Ստեփանե»-ի փոխարեն պետք է գրվի Խորեն վարդապետ Ստեփանե (տես Архиепископ Езрас Нерсесян "Предводители епархий Армянской Апостольской церкви в России 1717-2017", Москва, 2017, էջ 120-123)

էջ 96 "Армяно-Григорянским священнослужителем" տեղը պետք է լինի Армяно-Григорианким.

էջ 137 «Գևորգ Դ. կաթողիկոս Կոստանդնուպոլսեցի»-ի փոխարեն պետք է լինի կաթողիկոս Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի:

Վերոնշյալ թերությունները, սակայն չեն նսեմացնում ատենախոսության գիտական նշանակությունը: Վարդիթեր Գրիգորյանը կարողացել է լուծել իրեն առաջադրված խնդիրը՝ պաշտպանության ներկայացնելով մի աշխատանք, որը բովանդակում է հարցի ամբողջական քննությունը և լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Ուստի, միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող՝ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդին Վարդիթեր Գրիգորյանին շնորհել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ իր հայցած 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ:

Ստեփան Ստեփանյանց
ՀՀ և ՌԴ պատմական գիտությունների դոկտոր,
դոցենտ 10 սեպտեմբերի 2021թ.

Ս. Ստեփանյանցի ստորագրությունը հաստատում եմ
Անձնակազմի գծով տեսուչ

Գ.Վ. Պլեխանովի անվ. ՌՍՀ Երևանի մասնաճյուղ
Ереванский филиал РЭУ имени Г.В. Плеханова